



ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՅՈՒՄ 1876 ԱՄԻՆ

ՀԻՍ ՎԶ.

40 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1876



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՄԻԲԱՅԷԼԵԱՆ

1876

ՄԱՅՐ ԴԻՒՄՆ

Ստեփան Արարանեան	ժողով	Ա.	ԱՏԵՆԱԳԵՏ
Ռուսինեան	Էփէնտի	Բ.	ՎԱՐՃԱՆԱԿԱՆ
Տիգրան Եղանուֆեան	Էփէնտի	Գ.	»
Գարեգին Յ. Մելիքեան	»	Ա.	ԱՏԵՆԱԳԵՏ
Համբարձում Ս. Արամեան	»	Բ.	»
Առաքել Ալթուն Տիրի	»	Գ.	»

ՁԵՌՆՀԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒՄՆ

Տ. Յովհաննէս Բ. Մկրտչ	ԱՏԵՆԱԳԵՏ
Տ. Գրիգոր Բ. Սէնճեան	»
Սարգիս Աղաթիւեան	Էփէնտի

ԴԱՍՏԱՐԱՄԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՒՄՆ

Յովհաննէս Եղանուֆեան	Էփէնտի	ԱՏԵՆԱԳԵՏ
Գեորգ Ստեփանեան	»	»
Պողոս Պառնասեան	»	»

ԿԱԼՈՒՄՆՈՅ ԴԻՒՄՆ

Յակոբ Բաղդադեան	Էփէնտի	ԱՏԵՆԱԳԵՏ
Յովհաննէս Աղաթիւեան	»	»
Ստեփան Պէյլիկեան	»	»

ՅԱՐԱՐԵՐՈՒԹԵԱՆ ԴԻՒՄՆ

Տիգրան Եղանուֆեան	Էփէնտի	ԱՏԵՆԱԳԵՏ
Օգոսէ Խոստատեան	»	»
Նաղարէթ Դաշտաղեան	»	»

ՀԱՄԱՐԱՄԱՆՈՒԹԵԱՆ ԴԻՒՄՆ

Յարութիւն Մելիքեան-Գ. Պի	Էփէնտի	ԱՏԵՆԱԳԵՏ
Համբարձում Սաղաթիւեան	»	»
Նղիալաբ Մելիքեան	»	»

ԻՐԱՄԱՍՈՒԹԵԱՆ ԴԻՒՄՆ

Տ. Ներսիս Ժորգապետ Արարանեան	ԱՏԵՆԱԳԵՏ
Կարապետ Դաշտաղեան	Էփէնտի
Նշան Բաղդադեան	»

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՆ ԴԻՒՄՆ

Ռուսինեան	Էփէնտի	ԱՏԵՆԱԳԵՏ	ՎԱՐՃԱՆԱԿԱՆ
Մելիքեան Մամիկոնեան	»	»	»
Առաքել Ալթունեան	»	»	»

ԽՄԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԴԻՒՄՆ

Կարապետ Խիփիճեան	Էփէնտի	ԱՏԵՆԱԳԵՏ
Պետրոս Բէրեթեան	»	»
Ստեփան Փարապետեան	»	»

ԲԱՅՈՒՄ 1876 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԶ.

10 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1876

ՆԱԽԱԳԱՀ. — Ս. ՊԱՏՐԻԱՐԻ ՀԱՅՐ
ԱՏԵՆԱԳԵՏ. — ՍՏԵՓԱՆ ՓԱՇԱ ԱՍԼԱՆԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՄՓՈՒՆԻՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՄՓՈՒՆԻՔ

1. Խորեն Արքեպիսկ. Նաբ Պի
2. Կարապետ Եղիսկ. Սերբեան Բ.
3. Մատթէոս ի Եփրատեանց Բ.
4. Ամբրոսիոս Վ. Ռուբինեանց Բ.
5. Գարեգին ի Թաթարեանց Բ.
6. Խորեն ի Կերդեանց Բ.
7. Հայկուն ի Դիմաքեանց Բ.
8. Յովհաննէս ի Փափաղեան Բ. Պ
9. Ներսիս ի Աստանեան Բ.
10. Պողոս ի Խոստատեան Բ.
11. Եղիսկ ի Աղաթիւեան Բ.
12. Արքեպիսկ. Մամբրեան Բ.
13. Գեորգ Արծրունի Բ. 5
14. Գրիգոր Աճէմեան Բ. Պ
15. Խորեն Փէլիկեանեան Բ. Պ
16. Յարութիւն Սերբեան Բ.
17. Յովհաննէս Մկրտչ Բ.
18. Սուքիաս Ստեփաննոսեան Բ.
19. Սահակ Տ. Սարգսեան Բ.

ԱՆՔԱՐՀԱԿԱՆ
(Ա. Վ. Եփէնտի)
Պառնասեան, Կիլիկիա և
Պառնասեանի դուռ

21. Գրիգոր Պէրսեան Բ.
- Բացակայութիւն առաջին Բ. 2
- Բացակայութիւն երկրորդ Բ. Պ

22. Գեորգ Ստեփաննոսեան Բ. Պ
23. Խորեն Սահակապետեան Բ. 2
24. Կարապետ Աղաթիւեան Բ. 2
25. Համբարձում Մաղապետեան Բ. 2
26. Միսայր Գափաթեան Բ. 2
27. Յովհաննէս Պառնասեան Բ. 2
28. Յովհաննէս Ստեփաննոսեան Բ. 2
29. Մկրտչ Սարգսեան Բ. 2
30. Պողոս Պառնասեան Բ. 2
31. Սարգիս Աղաթիւեան Բ. 2
32. Սահակ Աղաթիւեան Բ. 2
33. Սահակ Աղաթիւեան Բ. 2
34. Սահակ Աղաթիւեան Բ. 2
35. Սահակ Աղաթիւեան Բ. 2
36. Սահակ Աղաթիւեան Բ. 2
37. Սահակ Աղաթիւեան Բ. 2
38. Սահակ Աղաթիւեան Բ. 2
39. Սահակ Աղաթիւեան Բ. 2
40. Սահակ Աղաթիւեան Բ. 2
41. Սահակ Աղաթիւեան Բ. 2
42. Սահակ Աղաթիւեան Բ. 2
43. Սահակ Աղաթիւեան Բ. 2
44. Սահակ Աղաթիւեան Բ. 2
45. Սահակ Աղաթիւեան Բ. 2
46. Սահակ Աղաթիւեան Բ. 2
47. Սահակ Աղաթիւեան Բ. 2
48. Սահակ Աղաթիւեան Բ. 2

ԳԱՆՈՒԹԱՆ ԵՐԵՄՈՒԹՅՈՒՆ		Մուշ
71. Կարողեա Շահարեան	Բ. Պ	121. Ստեփան Պ Պ. Փարազեանց
72. Մկրտիչ Մուրադեան	Բ. Պ	Տիվրիկ
73. Կարողեա Շահարեան	Բ. Պ	122.
74. Օղտն Խոճապարեան	Բ.	Չիլրոն և Մարաշ
75. Թոփղաթա	Բ.	123.
76. Գարեգին Յ. Մելիքեան	Բ.	Տրադիզոն
77. Ստեփան Խիտապարեան	Բ. 2	124.
78. Յովհաննէս Նուրեան	Բ. Պ	Պարտաւ
79. Դաւիթ Հովսեփեան	Բ. Պ	Տիգրանակերտ
80. Մկրտիչ Գ. Էստեան	Բ. Պ	Վան
81. Յովհաննէս Կրճիկեան	Բ. Պ	125.
82. Գարաթիւսիկ	Բ. Պ	126.
83. Յարութիւն Զինկերեան	Բ. Պ	127. Սիմոն Մարտաշեան
84. Յարութիւն Գ. Տառեան	Բ. Պ	Սիւնիկ
85. Սեփական Պէլիքեան	Բ. 2	128.
86. Սեփական Պէլիքեան	Բ. 2	Յաւի և Այրաշ
87. Եղիշապար Մելիքեան	Բ.	129.
88. Միսա Զաֆանդեան	Բ.	Սիւնիկ
89. Յակոբ Քաղապարեան	Բ.	Ռաւանիս
90. Յակոբ Ամասեան	Բ.	130.
91. Մաղաթ Շահարեան	Բ. Պ	131.
92. Խաղաթ	Բ. Պ	Կարա
93. Խաղաթ	Բ. Պ	132. Արթուր Յ. Սարգսեան
94. Խաղաթ	Բ. Պ	Չիլրոն
95. Սարգիս Ալթուն Տիւրք	Բ.	133. Համարձում Սարգսեան
96. Խաղաթ Պ. Մարտեան	Բ.	Գարաթիւս
97. Ուլթուն Պէլիքեան	Բ.	134.
98. Սարգիս Արապեան	Բ.	Ստանու
99. Սարգիս Արապեան	Բ.	135.
100. Սիմոն Միքայէլեան	Բ.	Սիւնիկ

ՕՐԱԿԱՐԳ

Ա. Վիսարանուրիս և Վիսարանուրիսի քանական Յանձնարարին՝ Եկեղեցական ատարար Կարեան Ազգ. Վարդապետ : [Գրանիշակ]

Բ. Վարդապետին Սանձնարարական . շարունակութիւն Վիսարանուրեան յօդուածաց Թաղական մատակարարութեան :

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Ատենայն քաղաքացաւ Ժամն 7 1/2 ին 'ի ներկայութեան 37 երեսփոխանաց , որոց վերջին թիւը յանգեցաւ 62 ի :

4.

Ընդունելութիւն հախորդ ատենագրութեանց

Ատենայն Փաշան յայտնելով թէ տասն ներքոյ նախնի սկսեալ վեց ատենագրութիւնք կան վաւերանշարժ : սակայն անոնցմէ չորսը միայն պատրաստ իսկ վերջին երկուքը սակաւին տարագրութեան ներքեւ են , անմիջապէս ժ. հատի՝ ատենագրութեան վրայ ի դիտողութիւն հրաւիրեց երեսփոխաններն , և տեսնելով որ դիտողութիւն ընող չկայ , քուէի դրաւ զայն , որ միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒՆԵՑԱՆ :

Նշանակեալ ի դիտողութիւն հրաւիրեց երես .

Գրանիշակը ԺԱ. և ԺԲ. նիստերու ատենագրութեանց վրայ , սակայն դիտողութիւն ընող չըլլալով՝ հետզհետէ քուէի դրաւ նաեւ զանոնք , որք միաձայնութեամբ ԸՆԴՈՒՆՈՒՆԵՑԱՆ Ժողովէն : Վերջապէս՝ ԺԳ. նիստի ատենագրութեան վրայ ի դիտողութիւն հրաւիրեց երեսփոխաններն :

ԱՆԱՅԱՅԵԱՆ ՇԻՆՈՂՈՍ ԷՑ . — ԺԳ. նիստի ատենագրութեան երեսփոխանաց պանկին մէջ երրորդ անգամ բացակայ նշանակուած եմ ես , բայց սխալ է . վասն զի բացակայ գըտնուած եմ միայն մէկ անգամ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Բ. ԷՑ . — 3 անգամ բացակայ ոչ տը չէ նշանակել ներկայութեան տու մարին մէջ , վասն զի երկրորդ բացակայութեանէ հետեւ երրորդ անգամին դիւանին կողմէ ծառայուելու է Ժողովին բացակայաց անունը , որպէս զի ըստ օրինի հրաժարեալ հրատարակութի :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ . — Վերադառնալու է .

ուսկից կառնուին իրենց կատարելիք պաշտօնին հրահանքը, ծախքերին ո՞վ կը հասուցանէ, վերադարձին որ՞ն տեղեկագիր կը մատուցանեն, վերջապէս Աղբը ի՞նչ դեր կը վարէ այդ ֆանըշական պաշտօնին մէջ: Առաջարկեմ որ Վարչութիւնը շնորհ ընէ տեղեկագրով մը Ժողովոյ ծանուցանել այն կարեւոր խնդրոյն բոլոր հանգամանքը, որոյն վրէ Ժողովը վիճարանութեան նիւթ ընէ զայն, և կամ օգուտը ճանչնալով ներքէ՛ որ այսուհետեւ շարունակուի և կամ եթէ անօրուտ և սպառնալիք դատէ՛, միանգամ ընդ միշտ վճաէ անոր արդեւումը:

Այս է իմ առաջարկութիւնս, որուն վրայ Ժողովին ուղղորդութիւնը հրաւիրել արժան կը դատուի, և կը խնդրեմ որ Վարչութեան դատիւ տեղեկագիրը ետ չը ձգէ իմ բացակայութեանս ամիսը:

ՇԱՀՊԱՅ Կ. ԷՖ. — [Փոխ Առնապետ ֆաղ. Ժողովոյ] Այդ առաջարկութիւնն եթէ զրով հաղորդուի Վարչութեան, պատրաստ ենք հարկ եղած պատասխանը տալ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Քանի որ Վարչութիւնը զրով կողէ, դժուարութիւն մը չկայ ինձ համար զրով հաղորդել զայն. բայց ըստ որում զրով առաջարկութիւն ընելով պարտաւարութիւն արտի ստանձնեմ վիճարանութեան մէջ զայն փաստաբանելու, որն որ անկարելի է բացաւ կայութեանս պատճառաւ, ուստի Ժողովին յանձնարարել համարձակեցայ այս խնդիրը. ազատ էք զայն ընդունել կամ յետաձգելու. ես կանցնիմ մեր Օրակարգին:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ես ինքնա կատանձնեմ:

→→→→→

ՕՐԱԿԱՐԳ.

Վերաբերելու ի վերայ տեղեկագրի բնական յանձնարարին՝ երկուամիս անապահովութեան Աղբ. Վարչութեան:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ասկէ 2 նիստ առաջ Աղբային Վարչութիւնն առաջարկութիւն

մը բերուե մեզ, որով կ'այտնէր թէ ինք կարեւոր կ'չամարի ներկայ պարագայից մէջ զիր մը մատուցանել յանուն Աղբային Ժողովոյ Բ. Վրան՝ խնդրելու համար որ արիւշ աղբայ ըլլալը չընորհամենքուն Հայոց աղբն ալ անխտարար մասնակցի:

Վարչութեան այս առաջարկութիւնը յանձնուեցաւ Հարստահարութեանց յանձնարարին, անոր անդամաց վրայ յաւելցնելով նաեւ Խորին Սրբազանն, որովս զի տեղեկագիր մը բերէ մեզ ծանուցանող՝ թէ Վարչութեան առաջարկած դրութիւնը պէ՛տք է մի, և եթէ պէտք է, ի՞նչ խնամով: Անցեալ նիստին յանձնարարմբն կողմէ տեղեկագիր Փշտիմարձեան Էֆէնտին ի բնմէ յայտարարեց թէ յանձնարարելը համաձայնութեամբ ընդունած է առաջարկեալ դրութեան պէտքը. կամ աւելի ճիշդ խօսելով, ներկայ պարագայից մէջ յանուն Աղբին ձայն յառնալու պէտքը. իսկ անոր խնամին և խըմբագրութեան դալով՝ մէջերին անհամաձայնութիւն պատահեր, անգամայ մեծ մասն ստորագրեր և մէկ մասը չէ՛ մասնակցեր: Երբ յանձնարարին բացատրութիւն ուղեցիր թէ ի՞նչ փաստ և պատճառներ ունեցաւ յիշեալ պէտքն ընդունելու, խոստացաւ դանիակ նիստի մէջ տալ այդ բացատրութիւնը: Ժամ է արդ այս խընդիրը ձեռք առնուլ. և որովս զի վիճարանութիւնիս գիւրանայ և բաւազայն վախճանի մը կ'արեանք համար, խնդիրը մէկ քանի ճիւղերու կը բաժնեմ որք են. առաջին՝ պէտքը. երկրորդ՝ խնամը. երրորդ՝ ձեռք. և վերջապէս՝ յառը կամ խնայարարներ:

Ահա այս չորս կէտերուն մէջ պէտք է սահմանափակի մեր վիճարանութիւնը. ուստի կը հրաւիրեմ նախ՝ յանձնարարին տեղեկագիր է՝ ֆինտին որ բացատրութիւն տայ թէ ի՞նչպէս յանձնարարելը համոզուեցաւ յանուն Աղբին ձայն հանելու պէտքն ընդունելու:

ՏՕՔ. ՓԵՇԵՄԲԱՆԱՋԵԱՆ ԷՖ. — [Տեղեկագիր Յանձնարարին] Աղբ. Վարչութեան կողմանէ պատկառելի Ժողովոյ 1876 Նոյեմբեր 26 թր. ատկանով առաջարկութիւն մը ներկայացաւ հետեւեալ կերպով.

«Աղբային Վարչութեան Խառն Ժողովը անխտելով որ Թուրքիոյ բարեկարգական ներկայ քննարկումն մէջ բանի մը գաւառաց բացառիկ փերայիւ արտօնութիւն և առանձնաշնորհում արտաւելու մասին դրսէ գաւառ առաջարկութիւն ակըլայ, առաջարկութիւն՝ որ բարեկարգութեան խնդրոյն հիմն եղող հաւատարմութեան անկողան և տէրութեան դարաւոր հաւատարմութեան հեղող Հայոց աղբին զգացման միաւայն հակառակ է, հարկ դառնց Թուրքիոյ Հայոց երեսփոխանութիւնը կազմող պատկառելի Ժողովոյ կողմէ խնդրագիր մը մատուցանել Բ. Վրան յետագայ խնամով թէ՛ ամէկ կողմանէ կը ընեմ որ բարեխնամ Տէրութիւնը պէտք եղած ընդհանուր բարեկարգութեան ներքին, որոյ համար ուրախ եմք. բայց միւս ակողմանէ խօսքեր ալ կ'ալտին որ միմիայն մէկ քանի գաւառներու բարեկարգութիւններ պիտի արուին խորհարար: Սոյն համարը մեծապէս օկը վերաբոյ Հայոց աղբն, որ Օսմանեան տէրութեան բազմադարեան հաւատարմութեան հաւատարմութեան քննարկումն մը չէ վշտացուցած իւր վեհապետ տէրութիւնը, և որ առաւել իրաւունք ունի իւր «հաւատարմութեանը համար տէրութեան շնորհաց մասնակցի ըլլալու առանց խտրութեան: «Խառն Ժողովը կը փութայ այն առաջարկը ներկայացնել պատկառելի Ժողովոյ «յաւադրութիւն և ի սրտաւ տնօրէնութիւն»:

Աղբային Ժողովն այս առաջարկութիւնը նկատողութեան տալով ուղեց անվճար պէն նութեան երկրորդ զայն, և գաւառական հարստահարութեանց հաւաքածոյն պատրաստող իւր վերջին յանձնարարին պաշտօն տուաւ անոր կարեւորութիւնը քննելու և եթէ հարկ տեսնէ Ժողովին ծրագիր մը բերելու: Չէր Յանձնարարմը շնորհալարտ է պատկառելի Ժողովոյ այս ամիս տուած մեծ փառահալութեան համար, որ նոր աղբայոց մ'է յաջ յանձնարարին իւր առաջին պաշտօնը յօգուտ Աղբին և ի դահութիւն Ժողովոյ կատարած ըլլալուն:

Յանձնարարմը փութայ նախ՝ իրեն յանձնարարեալ խնդրոյն առաջին կէտը քննութեան տալու աղբն է որ իւր աղբային ներքին դրոշմ վարչութեան համար սահմանադրութիւն մը ունի, որու շրջանակն օրհատի և անձուկ ըլլայ, անոր բարիքը սկսած եմք վայելել, թէ և անոր արամադրութեանց դրոշմադրութեան մէջ ակամայ թերութիւններ կը նշմարուին տակաւին: Արդ՝ երբ իրմէ անկատար աղբային կազմակերպութիւն ունեցող արիւշ աղբերը, որոնք տակաւին աղնուապետական դրութեան կը կառավարուին, յարմար տեսան որ և է կերպով դիմել առ Բ. Վրան և աղբերը որ ըլլալիք բարեշնորհմանց մէջ անմասն չը մնան, մեր Աղբին զոր օրինակաւորէս ներկայացնող մարմինն է այս Ժողովը, լուս կենալը կընար ոյլ և ոյլ մեկ:

առնուլ, այսինքն թէ՛ հարկ և կարեւոր էր Հայոց աղբին ձայն բառնալ այս միջոցիս և խընդրել որ Օսմանեան կայսերական կառավարութիւնն արդի բազմադարեւ վիճակին մէջ չը մոռնայ նաեւ իւր վաղեմի հաւատակ աղբն, որ այնքան դարեմէ հեռէ ո՛չ միայն իւր անապատ հաւատարմութեամբը բնական հոգ և տագնապ պատճառած չէ իրեն, այլ նաեւ իւր քաղը ձիրքն ու աշխատանքն երկրին շիւթապէս և բարոյապէս զարգացմանը նուիրած է:

Այսին եւր ըսելու որ, յետ վիճարանութեան յանձնարարին մէջ այս կէտին վրայ հարեաց տարբերութիւն չմնայ և անոր հարկը միաձայնութեամբ ընդունուեցաւ, ինչպէս որ այս նպատակաւ պատրաստուած և յանձնարարին մեծամասնութեան աստորագրութիւնը կրող ծրագիրը նախընթաց նիստին մէջ կարգաւ առաւին ունեցայ:

Չէր յանձնարարմը նախընթաց նիստին մէջ հարկ չտեսաւ այս խնդրագրին պէտքը պատճառարանելու, վրան զի անոր պէտքն ուրայող կամ չընդգիւծալիս չկար և այս վիճակին մէջ չէր սպասէր որ զայն պատճառարանելու պիտի հրաւիրուէր: Այսու ամենայնիւ Առնապետ Փալային ստիպման վրայ, ինչպէս փութայ յայտարարել թէ պատրաստ էր պատճառարանելու, կուգայ այսօր առաւիկ իւր պաշտօնը կատարել:

Մեր աղբը այս երկրին Ժողովոյ մէջ ոյն միակ աղբն է որ իւր աղբային ներքին դրոշմ վարչութեան համար սահմանադրութիւն մը ունի, որու շրջանակն օրհատի և անձուկ ըլլայ, անոր բարիքը սկսած եմք վայելել, թէ և անոր արամադրութեանց դրոշմադրութեան մէջ ակամայ թերութիւններ կը նշմարուին տակաւին: Արդ՝ երբ իրմէ անկատար աղբային կազմակերպութիւն ունեցող արիւշ աղբերը, որոնք տակաւին աղնուապետական դրութեան կը կառավարուին, յարմար տեսան որ և է կերպով դիմել առ Բ. Վրան և աղբերը որ ըլլալիք բարեշնորհմանց մէջ անմասն չը մնան, մեր Աղբին զոր օրինակաւորէս ներկայացնող մարմինն է այս Ժողովը, լուս կենալը կընար ոյլ և ոյլ մեկ:

հաւթիւններու տեղի տալ, ինչպէս արդէն ըս-
կաւ իւր. մանաւանդ այն անհիմն գրոյցները որ
մեր ազգին եռանդն ու մտաւորական կեանքը
չը գիտցողները սովորած են տարածել, յար-
մար տալիք գտած ինչ սա սխալ գաղափարը
տալու թէ Հայը քաղաքային կենաց օտար է բո-
ւորովին, թէ Հայն իր ազգային ճակատագրին
հետ կը չփոխի, և վերջապէս Հայն զուրկ է այն
ամեն զգացումներէ, որ զազդ մը դէպի յառա-
ջագիծութիւն կը մղեն:

Չենք ուզեր բնական տեղի տալ կարծելու
թէ յանձնախմբին այս մասին առած որոշումը
պարզապէս այլոց նամանակութեան կամ հետեւ-
զուրկեան համար եղած ըլլայ: Մենք ընել կու-
ղենք ինչ որ արդար է և իրաւայի և ինչ որ
օգտակար կրնայ ըլլալ մեր ապագային: Այլ
Հայը սովորութիւն ունենար ուրիշ հպատակ
ազգաց օրինակին հետեւիլ անխոհմտօր, չար
օրինակներ պակաս չեղան մանաւանդ վերջին
տարիներու մէջ, զորս Հայն ամեն ատեն դա-
տաւարտեց և իր հաւատարմութեանը վրայ
անդրադուրծնայ: Ազգային Ժողովին հարկ և
վայել էր ներկայ փախուկ պարագային մէջ իր
ազգին ներկայացուցիչ մարմինը՝ յայտարարել
պաշտօնապէս Հայոց ազգին իղձն, փախաքն ու
անկախութիւնները և այս աստիճան օգուտ քաղելով
նորոգել գրաւորապէս իւր անձնաւիրութեան և
հաւատարմութեան հաւատարմութեան օգոստոսա-
խնդրական և առ նորա Արցախեան Հայրու-
նքնակալն և առ նորա Արցախեան Հայրու-
նքնակալն կառավարութիւնն: Եւ ասի հետեւեալ
գլխաւոր պատճառով:

Լուսաւորութեան մէջ որչափ կը յառաջա-
նանք, տպագրութիւնն ալ այնչափ կը ճիւղա-
նայ, պարբերական թերթերն կը շտապեն և
հետեւաբար զանոնք ընթերցողներն ալ: Արդ
եթէ մեր ազգին մէջ օրագիրներն կը բազմա-
նան, գրողներն ալ կը բազմապատկեն: Օրագ-
րաց առ ազգն ըրած մեծամեծ ծառայութիւնը
անուրանալի են, բայց վերջապէս անոնց պա-
րունակութիւնները խմբագրաց անհատական կար-
ծիքն են միայն, որ երթալոյ է միշտ այլ և
այլ ձևեր տալու թէ Ազգին ծառայութիւն մը
ընելու համոզմամբ, թէ իւր ընթերցողները զո-

հայներու նպատակաւ և թէ ուրիշ զանազան
նկատուածներով: Մեր ազգն ալ, ամեն ազգաց
պէս, օտար և չարամիտ թշնամիներէ զուրկ չէ,
որոնք կարող են զանազան մասնաւոր գրու-
թիւններն ընդհանրացնելով՝ զանոնք իրեն ամ-
բողջ ազգին կարծիքն ու քաղաքականութեան
ծրագիրն ներկայացնելու, որ ընդհանրապէս
վնասակար կըլլայ Հայոց ապագային կամ գոնէ
օտարներուն ազգին վրայ ունեցած գաղափարը
կոտորածանայ մէջ ձգելու և չփոխելու կը ծա-
ռայէ, ինչպէս որ եղան արդէն, և զորս ոչ ոք
կրնայ արգելել եթէ ասիէ ետքն ալ տեղի ու-
նենան: Այս անանկութեանց պէտք էր միայն
գամ առաջին անգամ և ներկայ բարոյական
յեղափոխութեան ժամանակ Ազգ. Ժողովոյ
րեքնով բացարձակապէս յայտարարել առ որ անկ
է, ազգին միտքն ու փախարը. այնպէս որ թէ Ազ-
գային վարչութիւն և թէ ամեն անհատ, գրած
ու խօսած ատեն կարող ըլլայ ըսել առանց վա-
րանման «Ահա Հայոց ազգին ծրագիրը, առա-
ջին նորա քաղաքական դաւանութիւնը, անոր
եխտադրանքն զորս ամենայն խօսք կամ հրատա-
րակութիւն ըսի մասնաւորապէս կարծիք են, քիչ
սկամ չառ խնայողութեամբ յառաջ բերուած»:

Ասանցմէ յետոյ և գլխաւորաբար մէկ կէտ
մը կը մնար նկատուութեան արժանի, ինչպէս
չառեր կառարկին, թէ ներկայ խնդիրը զուտ
քաղաքական խնդիր մը ըլլալով՝ Ազգ. Ժողովն
իրաւասութիւն ունի՞ր և կրնա՞ր կարծիք յայտ-
նել այն մասին, առանց Ազգ. Սահմանադրու-
թեան շրջանակէն դուրս ելնելու և տէրութեան
օրինաց դէմ մեղանշելու: Այս առարկութիւնը
ձեր յանձնախմբին այնքան կնճառ չերեաց, որ-
քան կը թուէր խնդիրը հարեանցի քննողներուն:
Թողունք որ քաղաքական և վարչական խնդիր-
ներ շատ անգամ այնքան կը չփոխին իրարու
հետ, որ իսկապէս զոտար կըլլայ երբեմն ճիշտ սահ-
ման մը դժեւ անոնց մէջ: Ներկայ պարագայիս
մէջ այս դժուարութիւնն ալ չկայ. փասն զի
խնդիրը մի միայն երկրին ներքին բարեկարգու-
թեանց կը վերաբերի, այն երկրին՝ որոյ բնակիչ
Ժողովուրդներէն է Հայ ազգն և միանգամայն
նշանակութեան արժանի կարգէն: Մաղիւ չափ

խելք ունեցողը երբ կը տեսնէ որ իւր տպրած
երկրին ընդհանուր բարեկարգութեան խնդիր
կայ ծագած, չը կրնար անգիտածալ որ իրեն
անհրաժեշտ վերաբերութիւն ունի այդ խնդիրն և
անոր ելլը կենսական կարեւորութիւն: Տարա-
կոյս չկայ որ այս գիտակցութենէն յետոյ կար-
ծիր մը իղձ մը փախար մը կը ծագի մարդու
գլխին ու սրտին մէջ, զոր արտայայտելու պէտք
կգգայ նոյն իսկ իւր անձին արժանապատուու-
թեան համար, և որդարեւ պէտք է յայտարա-
րէ, քանի որ այն՝ վնասակար և դատաւարաե-
լի բնութիւն մը չը կրեր և իւր իրաւանց սահ-
մանէն դուրս չմնար: Դիւք այս վիճակին մէջ է
այսօր և Հայ ազգը: Ուստի և պէտք է ծայն
հանէ տպացուցանելու համար թէ կարող է ինք
ճանչելու բարենորոգման խորհուրդին յարգը,
զոր Օսմանեան կայսերական կառավարութիւնը
յարգած է. տպացուցանելու համար թէ ընդու-
նակ է ինք այն խորհուրդն օգուտ քաղելու և ի
զարգացումն երկրին զանի արդիւնաւորելու. ա-
յոցացուցանելու համար թէ երբ ուր բարենորոգ-
մամբ կատարեալ հաւատարմութիւն վայելելու
բողգին հանդիպի և որդարութեան շնորհն ան-
խափ վայելէ, երկրին զօրութեան և յառաջա-
գիծութեան նշանաւոր մի տարրը կրնայ հանդի-
սանալ: Այլ թուութիւն պահէ այս պարագային
մէջ, նոյն իսկ իւր ազգային կենդանութիւնն
կասկածի մէջ կը թողու առաջի աշխարհի և իւր
արժանեաց վրայ նոյն իսկ Օսմանեան կառավա-
րութեան շատ տխուր գաղափար մը կընծայէ,
ինչպէս որ եթէ երբեք քննելու ելնէ թէ ընդհա-
նուր բարենորոգմանց վերաբար խորհուրդն
ոչուտի ծագումն առած էր և ինչ կերպով ու
ճամբով յառաջ եկած, և կամ թէ այս մասին
եղանակ ու ձև մը առաջարկելու յանդէպէր,
այն ատեն քաղաքականութեան մէջ մտած և
իւր իրաւանց սահմանէն դուրս ելած կըլլար:
Բայց ինչպէս բացատրելի, ազգին ընկերքը բը-
նական և միմիայն ուղղակի իրեն վերա-
բերող կէտի մը վրայ տեսակ մը պարտա-
ւորութիւն կատարելէ անդին չանցնիր: Այլից

չատ' միթէ մեր Պատրիարքարանին հարկաւոր
տարիներէ ի վեր առ Բ. Գուռն ըրած խնդիր-
ները Ազգին օգտին և շահուց պաշտպանութեան
համար չեն: Միթէ օրինաց անկատար կամ
անհաւասար դրժադրութեան դէմ չեն բողա-
քեր մեր բազմաթիւ բագրիրները: Միթէ հա-
րաւասարութեանց հաւարածոյն պարունակող
տեղեկագիրը՝ որ քիչ որ յառաջ պատրաստուեցաւ
և որ Պատկառելի Ժողովոյ միանայն հաւանու-
թիւնը ստացաւ, մեր Ազգային Ժողովոյ ձեռնհա-
տութենէն բարձր խնդիրներ կը պարունակէր իւր
մէջ: Եւ ինչ տարբերութիւն ունի ներկայ
խնդիրն անոր մէջ նշանակեալներէն:

Այլ ինչք անշուշտ՝ որ ոչ ոք բողոքեց ա-
նոր եզրակացութեան դէմ և ամեն որ մեծ սի-
րով ու եռանդեամբ քուէարկեց: Այս կէտը
ձեր յիշողութեան մէջ արթնցնելով կը յուսով
որ բուսական խօսած կըլլամ հաստատելու հա-
մար թէ ներկայ խնդրագիրը Բ. Գրան մատու-
ցանելու խնդրոյն մէջ ոչ անպատահութիւն կայ
և ոչ ալ կատարածանայ տեղի տուող ամենաթե-
թեւ պարագայ մը, և հետեւաբար կանցնիմ Յանձ-
նախմբին ծրագիրը անգամ՝ մ'ալ կարգաւ, որ
Բարձր. Եղարգարն ներկայանալու համար պատ-
բառուած է, երբ ձեր քուէովն արժանանայ Ժ-
ղովոյ ընդունելութեան:

(Հոս կարգաց Տեղեկարար Էֆէնտին հա-
խորդ նախին մէջ կարգացած ծրագիրն, որ նոյն
նիստի ատենագրութեան մէջ արձանագրուած
է)

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Լսեցիք յանձնա-
խմբին սրտաճառարանութիւններն՝ որով Վար-
չութեան առաջարկուած գրութեան պէտքը կը
յայտնէ. նամանակս վերադառնալով մտիկ ըրիք յանձ-
նախմբին ծրագիրն՝ որ անցեալ նախին կար-
գացումէն էր, այս անգամ կարգացումին մէջ
փոքրիկ տարբերութիւն մը կը նշմարեմ. զոր
պէտք է յայտնեմ, որպէս զի Ժողովը գիտնայ
թէ՝ որ խմբագրութեան պիտի հետեւին:

ՏՕՐՏՐ ՓԵՇԵՏԻՄԱԼՏԵՔՆ ԷՖ. — Տարբե-
42

բութիւն չկայ, զիւանին տրուած պատճէնն ալ ասոր հետ նոյն է, ուրիշ բան է թէ որ զրչի սխալ մը պատահած է ընդօրինակուելու ատեն:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ուրեմն հրամայեցէք տեսնել ձեր աչօք, Ղիւտին յանձնուած ծըրադրին մէջ՝ « Յանձնուած կայսերական կառավարութեան և խոր քարեկամ Տէրութեանց ձեռք ասնելիք բարենորոգմանց ևս » գրուած է, և հիմա կարգացուած ծրագրին մէջ « Յանձնուած կայսերական կառավարութեան խոր քարեկամ ասնելիք համաձայնութեան » ձեռք ասնելիք ևս » գրուած է: Ասանց ո՞րք սխալ ընդունիք:

ՏՕՔՏՕՐ ՓԷՇՏԻՄԱՆԱՅԱՆ ԷՖ. — Այն՝ որ Ղիւտին յանձնուած էր անցեալ չարթուրէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Դժուար աղէկ. հիմայ որովհետեւ խնդիրը 4 ճիւղերու բաժնեցինք, և առաջին ըրինք պէտքը, ուստի պէտքին վրայ խօսք ունեցողը կհրաւիրեմ ի բեմն:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — [Սկզբում Յանձնախորհրդին] Յանձնախորհրդին մեծամասնութեան բերած ծրագիրը և անոր պատճառարանութիւնը բերէ ետեւ բնական է որ հետաքրքրութիւն պիտի ունենայք խմանալու յանձնախորհրդին փորձամանութեան՝ այն ծրագրին մասնակցելէ հեռանալուն պատճառները:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — [Բնութեամբ] Ներքէք, Փարսպեան Լիւթիտի, թէ և յանձնախորհրդին աշխատութեան պարագայներն խնդրոյն մէկ կարեւոր մասն կը կազմեն, բայց վիճարանութեան կարգը՝ նախ պէտքին վրայ է, ուստի անոր վրայ խօսեցէք, կաղաչեմ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Իմ խօսելիքս ալ նախ այդ պէտքին վրայ է, որ խմանալու և խմանալու թեան ատկով մինչև անհամաձայնութեան նիւթ եղաւ մէջերնիս: Նախորդ նստին Տեղեկարար Լիւթիտ յայտարարութիւն մ'ըրաւ և դուք՝ Ստեփանեան փաշա, կրկնեցիք զայն. իբրեւ թէ Հայոց ազգին երեսփոխանութենէն ստորագրեալ խնդրագրով մը ձայն մը հանելու պէտք

ըն համաձայնութեամբ ընդունուած է յանձնախորհրդին մէջ: Այս սխալ է. և հարկ կը դրամ բացարձակ այդ կէտը: Խակդրան երբ վարչութեան կողմէն առաջարկեալ գրութեանը պէտք ըլլալու կամ չըլլալու կէտը վիճարանութեան երեսփոխանացաւ յանձնախորհրդին մէջ, ևս էի միայն ընդգիծակայ այս մասին. դեռ Մատթէոս Արքայուն ճամբարութենէն դարձած չըլլալով նոյն աւուր նիստին ներկայ չէր: Այն պատճառարանութիւններն որ անդամակցացս կողմէ յառաջ բերուեցան, զիս չկրցան համազել թէ պէտք կայ յանուն ազգին ասանկ զիր մը երեսփոխանութեան կողմէն մատուցանելու. կը նկատէի որ եթէ Հայոց ազգը զիր մը մատուցանելով՝ ուրիշ ազգաց հետ համահաւասար պիտի կարենայ մասնակցել տեքութեան շնորհացը, հարկաւ ամեն Հայ կանխախակ կը փութայ ստորագրել այսպիսի զիր մը. բայց միթէ զիրը բաւական պիտի լինի: Ղեւրոյն վրայ չկրնալով համաձայնիլ, առարկուեցաւ որ նախ որոշենք թէ ձայն մը հանել պէտք է թէ ոչ. ևս ալ այդ անորոշ եղանակն ընդունեցին. և ի՞նչ եղանակաւ ձայնեալ որոշելու ետքի թողուցինք միաձայնութեամբ: Ես առաջարկեցի որ փոխանակ Այսին Ժողովին ծրագիր մը տանելու և բեւելու թէ առանց խորը քննելու հաւատք ընծայէ մեզ թէ՛ պէտք է ասանկ զիր մը տալ, և ստորագայի ծրագիրը ու Ք. Ղրան մատո՛, ուրիշ ևս զիւրին ճամբայ մը ձեռք առնուիք. ո՛ր Յանձնախորհրդին կանոնադրութեան շնորհիւ մը չինք. որուն մէջ Հայոց ազգին քաղաքական դատանութիւնը բացայայտ գծուի, տեղեկագիր մը՝ որուն պատասխանատուութիւնը միայն զայն ստորագրողաց վերաբերի, և աւելի ազատ գործուի, և տանինք զայն Ազգ. Ժողովին բեւելով որ ահա մեր ըմբռնումը ազգին քաղաքական դատանութեանը մասին, հարկ չկայ այլ ևս Ք. Ղրան զիր մատուցանելու, բաւ է յայտարարել միայն թէ Հայոց ազգը վստահ է Օսմանեան կառավարութեան վրայ, որ անխտիր իւր շնորհաց մատուցից կընէ իւր բոլոր հպատակ ազգերը, ինչպէս որ ըրած է ցարդ:

Յանձնախորհրդին անդամներն այս առաջարկութիւն ալ ընդունեցին, և երկու կերպն ալ կընենք ըսին. բայց ես չհամաձայնեցայ իրենց, և մատուցութեք ուղերձին վրայ վիճարանութիւնն սկսան: Բնականաբար ես միայնակ չէի կրնար դէմ կենալ. ուստի ես թէ՛ իրիւ երեսփոխան՝ և թէ՛ մանաւանդ իրիւ յանձնախորհրդին անդամ կարող չէի առանց պատճառարանութեանց խորը քննելու՝ ստորագրել պէտք է բեւելով անցնիլ և ստորագրել այդ ծրագիրը. ստոր համար հետամուտ էի յանձնախորհրդին մէջ խնդրոյն խորը մանել. և այնքան խորունկ հետաքննեցի, մինչև անդամակցացս զարմանքը հրաւիրեցի իմ այնչափ գգուշաւութեամբ ու չափաւորութեամբ վրայ:

Ծրագրին հիմունքը դրուելու ատեն արդարեւ տեսնուեցաւ որ երկու բան պիտի ըսուի. շնորհէ մեզ ինչ որ ուրիշ ազգաց պիտի չնորհեաւ. կամ ստոր հակառակ՝ մի շնորհէր ուրիշ ազգաց ինչ որ մեզ չպիտի չնորհեաւ. բայց այս վերջինը չէինք կրնար բեւել և ոչ իսկ մտքէ անցնել:

Արդէն զիտէք Արեւելեան խնդրոյն արդի վիճակը. մէկ կողմէն Օսմ. տէրութիւնը մատչելի է իւր կառավարութեան սահմանադրական ձև և սուղութիւն մը տալու. թէ և չգիտենք՝ ի՞նչ պիտի ծնի այս նոր դրութենէն. բայց փափաքելի է որ իրապէս սահմանադրական ըլլայ. իսկ թէ այս նոր դրութիւնը բաւական պիտի ըլլայ թէ ոչ՝ երկիրը կատարելապէս բարեկարգութեան շրջանին մէջ մտնելու և հպատակ ազգերը գոհ ընելու: այս կէտը ժամանակին գործն է: Արդ առանց դիմաւորելու թէ տեքութեան շնորհելք սահմանադրութիւնն ի՞նչ ըսկըդունենք իւր մէջ պիտի պարունակէ, կըրնա՞նք մեր գրին մէջ մեր համոզումը կանխել և յայտարարել, ի հարկէ ոչ. այս մասին համամիտ գտնուեցան Յանձնախորհրդին բոլոր անդամք: Միւս կողմէ գեաղանախորհուրդը, որ քաղաքական արդի կայութենէն ծագում առած է, առաջարկելք բարեկարգութեան ծրագիր ունի. տեղեկարարութեան ծրագիրն թէ անոր առաջարկութիւնը ընդհանուր է թէ մասնաւոր. թէ որ ընդհանուր է, անտեղի է մեր առ այդ խնդիր մատուցանելու կանխելը. իսկ թէ որ մասնաւորաց համար

է միայն, ընդհանուր բարեկարգութիւն անկէ ըսկայանելիս անօգուտ է. ուստի իմ համոզումն էր և է թէ, ոչ Օսմանեան Սահմանադրութեան և ոչ գեաղանախորհուրդոյն գիտաւորութեանց վրայ կրնանք կանխել և ազգովին յայտարարութիւն ընել: Հետեւաբար յանուն ազգին երեսփոխանական ժողովիս կողմէն առ Ք. Ղրան այդպիսի զիր մը մատուցանելու ոչ նիւթ գտայ և ոչ պէտք է: Ինձի համամիտ գտնուեցան նաև Տ. Մատթէոս և Տ. Կարապետ սրբապետները:

Ահա կարճ ի կարճոյ իմ բացատրութիւններս տուի:

Տ. ԽՈՐԷՆ Վ. ԿԻՐՕԵԱՆ. — Ազգային Ժողովը խնդիր մը ունի այսօր որոշելու, այն է թէ արդեօք պէտք է թէ ոչ՝ վարչութենէն առաջարկեալ գրութիւնը Ք. Ղրան մատուցանել: Կարծեմ թէ ամենքս միաբան ենք սա կէտին վրայ թէ Ժողովիս վիճարանութեան ենթարկուած այն խնդիրը խիստ կարեւոր է, և խորաքննելու որ կարեւոր ունի խօսիլ այս նիւթոյն վրայ իւր կարծիքը յայտնելու համար, ինչպէս որ ես ալ. սակայն կարելի բան չէ որ այսպիսի կարեւոր խնդիր մը միեւնոյն օրը ներկայանայ Ժողովին և մի և նոյն օրը վիճարանութեան առնուի և վերջին որոշումն ընդունի. ուստի իմ կարծեօքս պէտք է չարթմ մը միջոց տրուի. որպէս զի խորաքննելու երեսփոխան ժամանակ ունենայ խնդրոյն վերաբերեալ բոլոր գրութիւնները սերտելու, և ըստ այնմ արժանապէս պատրաստուի խօսելու և բեւել տալու:

ՉԱՅՆԵՐ. — Խնդիրը նոր չէ, անցեալ չարթուրէ ներկայացեալ է Ժողովին:

Տ. ԽՈՐԷՆ Վ. ԿԻՐՕԵԱՆ. — Ստեփան, գրութիւնն ու ծրագրաց և ժամանակ չունեցայ խնդիրը սերտելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Ստեփան հայր սուրբը կընդմիջեմ իրեն յայտնելու համար թէ յանձնախորհրդին ծրագրին անցեալ չարթուրէ ներկայացաւ Ժողովին. տեղեկարար Լիւթիտ իւր բացատրութեանց մէկ մասն այն օրը բերաւ, նայի հազարեց և այսօր գրով կը ներկայացու

նէ ամբողջապէս . ուստի չը կրնար ըստիլ թէ մեր ըրածը մէկ օրուան մէջ խնդիր մը ներկայացունէ , վիճարանիլ և որոշել է :

Տ. ԽՈՐԷՆ Վ. ԿԻՐՈՅԱՆ. — Կընդունիմ այդ ըրածը . Առեւտրական փառք . այնու հանդերձ կ'աւարտիմ խնդիրը սերտել և կարծիքս յայտնել , թերեւ օգտակար ըլլայ Ազգին . այս պատճառաւ կ'աւարտիմ որ խնդիրը յաջորդ նստին յետաձգուի :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Առեւտրական փառք և ճիւղերու բաժնեց խնդիրը , որոյ տուալինն է պէտքը , Բ. խնայող . Գ. ձեռք և Գ. խնայողութիւն յատկէ : Այժմ պէտքիկ վրայ է վիճարանութիւնն , այսինքն թէ արդի պարտաւորութիւն մը պէ՞տք է մի Ազգին կողմէ ձայն հանել :

Լսեցինք յանձնարարին մեծամասնութեան կողմէ Տեղեկարար Էֆէնտիին և փոքրամասնութեան կողմէ Փափաղեան Էֆէնտիին տուած բացատրութիւնները : Տեղեկարար Էֆէնտիին յայտնեց թէ ձայն հանելու պէտքին վրայ յանձնարարութեամբ համաձայնած է . Փափաղեան Էֆէնտիին ալ զրեթէ նոյնը հաստատեց

ՓԱՓԱՂԵԱՆ Ս. ԷՖ. — [Բերմիշեալ] Առաջին հիմնարկ . իմ ըստս առ էր . երբ ձայն մը հանելու պէտքը ընդունեցի , ոչ թէ Ազգային Ժողովը կողմէ , այլ յանձնարարին կողմէ հանելու պայմանաւ :

ԵՆՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՖ. — Լսել . ձայն մը հանելու պէտքն ակզբամբ ընդունել էր , միայն եղանակի մասին կը տարբերէր , և տարբերութիւնիդ այս է . յանձնարարին մեծամասնութիւնը կըսէ թէ Ազգային Ժողովը ձայն հանէ , իսկ փոքրամասնութիւնը կըսէ թէ յանձնարարութեամբ ձայն հանէ . ըսել է թէ երկու կողմն ալ ձայն հանելու պէտքը կընդունին . բայց եղանակին վրայ տարբերութիւն կայ եղբի մէջերին , այդ ուրիշ բան է . ուրեմն մեզի համար ուրիշ բան չմնար բայց եթէ որոշել թէ ձայն հանել պէ՞տք է մի : Ես կըսեմ թէ ձայն մը

հանել պէտք է , բայց ի՞նչ եղանակաւ . այդ մասին երբ կարգը գտայ , այն ատեն կը յայտնեմ իմ կարծիքս :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍԿ. — Ստացէ է որ յանձնարարին առաջին դաժմարանը ներկայ չէի . իսկ երկրորդ դաժմարանն առաջ երբ Բերայի Թաղային խորհրդարանին մէջ անպաշտօն կերպիւ կը խօսէին ևս հետեւին ունկնդիր եղայ : Թէ՛ հոն և թէ՛ Ղալաթի յանձնարարին երկրորդ դաժմարանն առնելովս որ առ Բ. Գառն գիր մը պիտի տրուի իմ առաջին պատրաստած այս եղանակէ մէք մինչև ցարդ բանի մը անգամ ձայներ հանեցին , որոնք ուրիշ բան չէին նշանակել , և թէ ոչ այն թէ՛ մեք ամբողջ երբ միմեանս և թէ պէտք է որ հաւատարմութեան սկզբանց համաձայն մեր վիճակը բարեկարգ : Եթէ այս չէր , հազա ի՞նչ էր 71 ի մեր հարստահարութեան տեղեկարարը , ի՞նչ էր այս տարուան Մեծ Եպարքոսին մատուցեալ 7 խնդրին , ի՞նչ էր Ազգային Ժողովին ներկայեալ հարստահարութեան վերջին հաւաքածոյն . այս ամենն ուրիշ բան չէին նշանակել , այլ ինչպէս ըսի՝ մեր ազգը լաւ վիճակի մէջ չէ , օրինաց դէմ զեղծումներ և զրկողութիւններ կը լինեն , և թէ պէտք է ասոնց առաջին ասնուի , որ ուրիշ կերպիւ չըլլար , բայց եթէ այն բարենորոգումներով զորս Տեղեկարար խոստացած է ի գործ դնել : Այս նկատմամբ յանձնարարին մէջ յայտարարեցի թէ հարկ չէ մեզի նորին ձայն հանել , և եթէ հանենք՝ օգուտ բերելու տեղ թերեւ զուրա բերէ : Այս գիտողութիւններն ըրած ատենս գիրը տաճիկերէնի կը թարգմանուէր արդէն Պատրիարքարանի գիւանդարին ձեռք . և յանձնարարին անդամները կըսէին ինձ թէ այս ձայնով պիտի մտնէ մեր ազգն ալ այն դեպքերու խորհրդին մէջ , որ Թուրքիոյ բարենորոգմանց համար գաւառաւոր է : Հարցուցի թէ մեք ուղղակի՞ պիտի մտնենք այդ դեպքերու խորհրդին մէջ . ըսին թէ ոչ . ուղղակի , այլ տէրութեան միջոցաւ պիտի մտնենք . ուրեմն ըսի՝ հարկ չկայ մեզի որ ձայն հանենք , քանզի արդէն տէրութիւնը ձայն կը հանէ դեպքերու

խորհրդին մէջ թէ՛ մեզի և թէ՛ ուրիշ ազգաց համար : Այսու ամենայնիւ յանձնարարին անդամներէն Տօր. Փէճախմալեան Էֆէնտի այդ ընկած է ըստ , և տեսայ որ իրաւ՝ յանձնարարին իւր մեծամասնութեամբ ձայն հանելու պէտքն ընդունել ընկացեր է : Մինչև ցայսօր յանձնարարին մէջ ձայն հանելու պէտքին դէմ էի , այսօր ալ այս բեմին դարձեալ կըսեմ թէ ես համաձայնած չեմ յանձնարարին , բնաւ համաձայն մը դրացած չէ իմ մտքիս մէջ թէ ձայն հանելու պէտք կայ . և արդարեւ ի՞նչ հարկ ձայն հանելու քանի որ մեր Ս. Պատրիարքը և Ղալաթիինը կաշառտին այդ մասին : Վերջապէս՝ թէ իրեւերեւութեան և թէ՛ իրեւ յանձնարարին անգամ կը յայտարարեմ իմ այն համազումս թէ բնաւ ձայն հանելու պէտք չկայ և թէ համաձայն չեմ յանձնարարին կողմէ տրուած բացատրութեանց , և անոր բերած ծրագրին մէջ մասնակցութիւն չունիմ . մինչև իսկ Պափաղեան Էֆէնտիին չափ ալ համաձայնած չեմ յանձնարարին : Բայց թէ որ Ժողովը ընդունի պէտքն , այն ատեն իմ կարծիքս կը յայտնեմ թէ ի՞նչ եղանակաւ պէտք է խորհրդել և մատուցանել այդ վերջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Յոման Ազգին ձայն բաւական պէտքին վրայ թէ յանձնարարին և թէ ընդունալի կողմին բացատրութիւնները լսեցի . կը մնայ այժմ քուէով որոշել՝ պէ՞տք է թէ ոչ , և եթէ պէտքն ընդունուի՝ անցնիլ անմիջապէս այն կէտին՝ թէ ի՞նչ խնայող :

ՓԱՓԱՂԵԱՆ Ս. ԷՖ. — Ես այնպէս կը կարծեմ թէ ձայն հանելու պէտքին վրայ դեռ բացատրութիւնը կը պակասի . առկաին չմեկնուեցաւ թէ ի՞նչ պատճառի կամ ո՞ր համազման վրայ է այդ պէտքը :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — Թերեւ ուշադրութիւն չէք ըրած , Փափաղեան Էֆ. երբ յանձնարարին տեղեկարարը արտայայտեց այն ամեն պատճառներն՝ որոնցմով ձայն հանելու պէտքը կը բացատրէր : Միւս կողմէ թէ՛ դուք և թէ Խզմիրեան Սրբազան բացատրեցիք թէ ի՞նչ պատճառներով չէք համազում և չէք ընդունած

այն պէտքն : Ուրեմն այսչափ բացատրութիւններ լսուելէ ետեւ բնականաբար Ժողովին կ'մնայ իւր վճիռը քուէով յայտնել :

ՄԵՐԵՆԷՄ-ԳՈՒԼԻ Տ. ԷՖ. — Ղալաթիեան խառն Ժողովը յանուն ազգին ձայն հանելու պէտքը տեսնելով՝ ասկէ երկու նիստ առաջ Ազգային Ժողովին բերեալ էր այս խնդիրը գրաւոր առաջարկութեամբ մը , զոր սերտելու համար հարստահարութեանց վերջին յանձնարարին յանձնեց Ժողովը : Յանձնարարին ալ այդ պէտքը տեսել և ընդունել է համաձայնութեամբ : Այնու զի Խզմիրեան Սրբազան թէ և յանձնարարին անգամ , բայց ինչպէս իւր տուած բացատրութիւնէն խնայմար , ինք ներկայ չէ գտնուած յանձնարարին այն նստին՝ որ համաձայնութեամբ պէտքն ընդունուած էր : Յայտնի է թէ որեք Ժողովի մը մէջ երբ որոշում մը լինի , ներկայից մեծամասնութիւնը կը վճիռուի և դուրս մնացող անդամաց ձայնը չվճիռուի : Իսկ Պափաղեան Էֆէնտիին ներկայ էր յանձնարարին մէջ այդ ուրոշումն եղած ատեն , և թէ և իսկ զրեթէ ընդունալիս էր պէտքի մասին , բայց վերջապէս այս կամ այն պայմանին տակ ընդունեց : Ես պայմաններուն վրայ չեմ ուզեր խօսիլ , պակե տե կերպարի , և խնդիրն ստիպողական ըլլալով մէկ շարքի մէջ միւսը չլինար մնալ , քանզի պատե՛ ժամանակը կը կորսուի : Ես կըսեմ թէ յանձնարարին օրինաւորութեամբ համաձայնած է պէտքն ընդունիլ , պայմաններն ուրիշ են . ուստի ժամանակ չանցնելու համար կ'աւարտուիմ քուէի դնել անմիջապէս այս պէտքի մասը և թէ որ ընդունուի , անցնիլ միւս կէտերուն :

ՓԱՓԱՂԵԱՆ Ս. ԷՖ. — Պէտքին վրայ Տեղեկարար Էֆէնտիին տուած բացատրութեանց մէջ կէտ մը միայն կը նշմարուի , այն է թէ այս միջոցին լուս չկենանք և մեր ազգին քաղաքահան դաւանութիւնը յայտարարենք աշխարհի Ստեփան իւր կարգացած ծրագրին արդեօք մեր ազգին քաղաքական դաւանութեան յայտադրող կընա՞յ սեղանիլ . այդ ծրագիրը և իւր ըսած պատճառարանութիւնները մեկզմէկ չեն գրկեր :

(Բերմիշեալ — Խնդրէն դուրս կ'ելնէ , պէտքին վրայ թող խօսի :)

Որովհետև տեղեկություններն Գրատնապետության խոսքերն ենք լսելով սկսած սրտենք պետքը, ուստի հարկ կը համարվի ըսել թէ ցուցուցած պատճառաբանությունները չեն համաձայնիր իւր ծրագրոյն :

ԱՏԵՆԱՊԵՏ ՓԱՇԱ. — [Բնորոշելով] Ներքեյք, Փախաղեան էֆէնտի. գրութեան իմաստին և ձևին վրայ խօսելու ժամանակը չէ. առ այժմ միմիայն պէտքին վրայ շարունակեցէք խօսքերնիդ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Տեղեկարեր էֆէնտին այդ պէտքը փաստաբաններու համար ինչ որ խօսեցաւ, ևս ալ այն խօսքերն է որ կը բնաւ գտնուի. և թէ անոր խօսել չենք կարող, ինչի ալ չենք կարող. իրաւունք կունենայիք : Տեղեկարեր է. ֆէնտին թող բարեհաճի իր ծրագրին մէջէն մեր աղբին քաղաքական դաւանութեան մասերը ուրոշակի ցուցնել : որովս զի մենք ալ խորհիմք թէ այս միջոցին գէթ այդպիսի հրատարակութիւն մը պէ՞տք է թէ ոչ : Զայն մը հանելու պէտքին վրայ երբ յանձնախմբին մէջ կը խօսուէր, մերթ ըստեցաւ թէ այս ինչ կողմէն ալ այդ ձայնին պէտքը կը տեսնուի, և թէ այն ինչ կողմէն ալ կուզուի. բայց զայս ըսողներուն կըցկըտուր բացատրութիւններէն չկրցայ հասկնալ թէ ո՞ր կողմի ըսուածը տեղի ունի . . .

ՏԵՂԵԿԱՐԵՐ ԷՖ. — Կը բողբեմ այդ թշնամական խօսքերուն դէմ :

